ԹԻՒ 381 Զ · ՏԱՐԻ Ը· ՇՐՋԱՆ **1874** 22 ՄԱՅԻՍ ՀԱՐԵՒՇԱԲԹԻ

Ամէն իւրաքանչիւր շաբաթը՝ 32 օրինակ է ։
Յառաջադրութեան տեղն է Պօլիս, Զինեթիլլ—խան վերի յարկ թիւ 18 ։
Դուրս երթալիք թերթից փոստային ծախքը առնողին վրայ է։

Շաբաթին դինը դահեկան կանխիկ 60
Կիսաշաբաթը ,, ,, ... 30
Մէկ թիւը՝ փարայ 50
Ծանուցման տուղն է դահեկան 2

ՀԱՐԱՄԱՏՈՒԹԵԱՆ ՄԸ ԹԱՅՏԱՌԱԿՈՒԹԻՒՆԸ

Տկարամիտ մարդիկ երբ արեւուն կամ լուսնին խաւարումը տեսնեն, կ'սկսին իրար անցնիլ և չարագուշակ մեկնութիւններ տալ։ Այս կարգի մարդոց նախապաշարեալ կամ ոգէտ կ'ըսուի, որ սեռակ երեւոյթներուն պատճառը չգիտնալով, ահու դողի մէջ կը մնան։

Չարամիտ մարդիկ ալ կան որ այդ սեռակ երեւոյթներուն պատճառը գիտնալով, դարձեալ չարագուշակ մեկնութիւններ կուտան, որ ռամիկը կամ ոգէտը ահու դողի մէջ ձգեն, և իրենց չար կամքը կատարուի։

Տկարամիտ և չարամիտ, երկուքն ալ ընկերութեան ջլատակար են, բայց չարամիտը վտանգաւոր ալ է։ Երբ ձեռքը գրիչ և թերթ ունեցող անձ մը այսպիսի չարամտութիւններ կ'ընէ, և իր չար կիրքը յագեցնելու համար գիտցած և հասկցած բաներն այլեւայլ մեկնութիւններ կուտայ, կամ թէ՝ ժողովրդեան մէջ տրուած մեկնութիւններուն կարեւորութիւն տալով, անոնց արձագանգ կուտայ իր թերթին մէջ, այս սեռակ խմբագրի մը չարամտութիւնը նշաւակէն ալ ողջամիտ խմբագրագործն է։ ահա մենք ալ այդ պարտաւորութիւնը կը կատարենք Մասիս ի շաբաթ աւուր թերթին մէջ հրատարակեալ և պարկեշտ ժողովրդեան նոդհանք տուող այն չարագուշակ մեկնութեանց համար, երբ թէ ամեն. Ս. Պատրիարքին կայսերական պալատը չկոչելը պատճառ ունի եղեր մեկեր, և այս պատճառն ալ Մասիսի խմբագիրը յաւօք սրտի (թէ բերկրութեամբ սրտի) կը ծանուցանէ, և այն ատենն ձգելէ երկիւղածութեամբ մը, որ չամչնալով ալ եթէ կուտայ ոգին, եթէ իրեն գլխին հարուած մը չգայ այդ պատճառաւ։

Երնեկ Աղգին, որ քեզի պէս գիմագրկուխ խմբագիր ունեցեր է. վասն զի դուշակած պատճառդ իրաւացի ալ ըլլար, և օտար թերթերն ալ հրատարակէին, դուն իրաւ Հայ խմբագիր բոլոր ուժովդ սիրտ հերքեիր. մինչդեռ հիմա յանդարտ տա տախնէրէդ վրէժ առնելու համար այդպիսի վատուկ խնդիր մը առարկայ կընես, և այն ալ փոզոյներէն ժողվելով, և ամենևին իրականութիւն չունեցած ատենը։

Երկուշաբթի երեկոյ Բ. Դռնէն ծանուցուեցաւ ի Պատրիարքարան, թէ վեհ. Յուլ-

թանը բարեհաճած է ընդունել իր ներկայութեան պալատին Ս. Պատրիարքն մեր յառաջիկայ շաբաթ առաւօտ ժամը 3ին։

Հասկցա՞ր հիմա ըլլոռ մարդ. դրածդ օրթան մնայ և խայտառակուելար, և այս ալ դիպուեցաւ էֆէրնէ դրան, Պրուսալի, Գուզուլչանի ևն. ևն. մնանին, չարաւիտ և ձենգաւոր հրատարակութեանդ չարքին մէջ . . . ։

Էրիզայի պատուաւոր ազգայնոց կողմանէ հետեւեալ բաղմաստորագիր բողոքագիրը ղրկուած է մեզ հրատարակուելու խնդրանօք։

. . . Խմբագիր

Կը խնդրեմք Ձեր արդարասիրութենէն, որ բարեհաճիք հետեւեալ մեր արդարացի բողոքը աղատախօս Մամլոյդ մէջ ղետեղել։

Անցեալ շաբթու Ալէմթճեանք հետագիր մը ղարկած էին իրենց կուսակցայ, որ կը ծանուցանէին թէ Ալէմթճեան վերստին իւր պաշտօնին կոչուեցաւ։ Այս լուրը երբ ժողովրդեան մէջ տարածուեցաւ մեք առաջին անգամ չ'հաւատացինք. սակայն մեծ եղաւ զարմանքնիս, երբ բօսթան դալով փունջի 880 թիւ թերթը կարդացինք և տեղեկացանք՝ որ յիշեալ վարդապետին Առաջնորդ վերահաստատուիլը ստոյգ է։

Փունջ՝ որ այս խնդրոյն մէջ առաջին կարգի հակառակ կը ձեւանար ասկէ յառաջ, փունջ կըսեմք որ ձայնը երկինք կը բարձրացնէր «Ցուդա վարդապետը» ընտրուիլ այս անգամ իր 880 թիւ թերթին մէջ մէկ ու կէս սիւն զոհած էր յիշեալ Ցուդա վարդապետին որ գովեստ կը տեղար։

Զամաչեցի՞ր փունջ այդ սեւ տողերը մեզ ուղղելու. դու որ ժամանակ մը կը բողոքէիր էրիզայեցւոյն դէմ ընտրուիլ թէ, «ինչո՞ւ անտարբեր կը մնաք էրիզայիք» այսօր ինչպէս մինչ նոյն Ցուդայ անուանած անձդ մեզի խրկելու համար ճիգ կը թափես, և կը համոզես որ ընդունիմք ու չահիմք զայն։

Կը հարցնեմք, չահախնդիրդ փունջ, Ցուդայ արդարացաւ, որ անոր դատակից անուանածդ ալ այսօր արդարանայ։ Եթէ Ալէմթճեան մեղայ ընտրուիլ մը կրնար արդարանալ, ինչու ուրեմն կանխաւ ուշադրութիւն չդրիր զայն Ցուդայ անուանած ատենդ։

Բայց դուք ով փունջ, մի կարծէք որ էրիզայնակ Հայը այդքան ապուշ ըլլալով, չի հասկնայ ինչ գաղտնիք ըլլալն. լաւ հասկցած եմք որ դրամին է այս ամեն եղելութեանցդ չարժառիթը . . . Մտածեցէք և գտէք ուրիշ մ'ալ, որ Պօլիս տանիք և ուզած կողմերնիդ քաշքշէք անոր խնդիրը։

Դառնամք արդի վարչութեան։ Տեարք, այդ ինչ համարձակութիւն էր ըրածնիդ, որ նախորդ վարչութեան օրինաւոր որոշումը խզելով, և մեր բողոքագիրները՝ որ տակաւին ձեր գիւանը կեցած են, առանց ուշադրութեան առնելու, կրկին էրիզա կը վերադարձընէք ղԱլէմթճեան։

Ալէմթճեան մը՝ որ տակաւին անցեալ վատութեան դրօշմը իւր ճակտին վրայ ընդունած էր։

Տեարք, կառարկէք թէ, տեղւոյս ժողովրդեան խնդրագրեր եկած են։ կը հարցնեմք, մինչ չ'կարդացի՞ք մեր վերջին բողոքագիրը, որ կամբաստանէինք ղԱլէմթճեան ընտրվ թէ՝ խարդախութեամբ գործադրեց Սահմանադրութիւնը. միթէ արժան չէր մեր այս բանին ուշադրութիւն դարձնելու, ո՛վ կընդունի անոր ընտրած ժողովականները, որ անանց խնդրագրին կարեւորութիւն տալով կը տեսրինէք. որ Ալէմթճեան դառնայ էրիզա։

Տեարք, մանաւորապէս կրօնական ժողովոյ Ս. Հարք, ձեր թքածը ինչո՞ւ լղցիք . . . չէ՞ք խղճար ողորմելի ժողովրդեան, Ալէմթճեանը կը խրկէք՝ որ Շահ Հիւսէյինի հետ կռնակ կռնակի տալով ամեն բան ի գործ դնեն, կեղեքեն, հարստահարեն, վերջապէս

թէ բարոյապէս թէ նիւթապէս ինչ չարիք որ ուզեն հասցնեն խեղճ ժողովրդեան. ասոնց համար կը խրկէ՞ք, այնպէս չէ՞։

Մինչդեռ ձեր ձեռքը անցած վատ և վնասակար հովիւ մը՝ կրկին իր միճակը կը դարձնէք, Հայաստանցին ինչ յոյսով բողոքէ իր գլխուն վերեւ կեցածներուն համար, ևս կարելի բան է որ ձեղնէ օգնութիւն ապասէ։

Տեարք, օրօրոցին մանուկէն մինչեւ 80/90 տարեկանը, անէծք կը տեղայ ձեր վրայ, եւ կըսէ «մեզի պէտք չէ այնպիսի վարչութիւն մը, որ հարստահարիչ մը կը խրկէ մեզի, որպէս զի մեր ապագան թշուառացնէ...» այս ըսելով իւր շրթունքներէն անէծք կը թափէ ձեր վրայ։

... խմբագիր. այս չաբթու իրերու վերջին վարձ, հեռագիր մ՚ալ ղարկինք Պատրիարքարան, պիտի սպասենք անոր պատասխանին. տեսնենք արդիւնք մը պիտի ունենա՞յ...

Եթէ վարչութիւնը դարձեալ ուշադրութեան չառնու մեր այս վերջին հեռագիրը, պէտք է որ վերջինը խորհի... որովհետեւ կընէր մեր վարչութիւնը, որ նախ խորհէր հապա տնօրիներ։—մանաւանդ պէս Ցեղապահ Սրբազանը, որ կարծես իր պաշտօնի կոչունէն կոպասէր այն խնդիրը՝ այսպէս լըմնցնալու համար —։

... խմբագիր. կը խնդրեմ՝ որ բարեհաճիք ձեր դիտողութեամբը հանդերձ հրատարակել զայս, որովհետեւ ձեր անցեալը կ՚ապացուցանէ թէ վատ փունջին նման երբէք չէք ընդիր ուղիղ ճամբէն. թող փունջ աշխատի իր շահախնդրութեամբը հարստանալ. իսկ դուք՝ ինչպէս մինչեւ հիմայ նոյնպէս այսուհետեւ արդարութեան չնորհիւ պիտի ապրիք։ Մնամք միշտ Ձեզ

1874 Մայիս 8 (Աստղերեան)

Էրիզա

Այն խնդրոյն վրայ մեր խօսելիքը շաբաթ օր։

ԳԱՏԸԳԻՒՂԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Պօլսոյ անուանի աստղաբաշխ հրեայ Ավրահամ Ֆիլոն մարդարէութեանը համեմատ գադարիպ ալ վերջապէս անցայս 28 ին, այսինքն գալ երկուշաբթիէն չորեքշաբթի լուսնալու դիշերը պիտի կործանի եղեր, անանկ որ յանկարծ արեւմտեան ատտակաչունչ քամի մը պիտի վչէ, գիշեր ըլլալով արդէն մը-թութիւն ալ կայ եա՛, մէկ կողմէն երկինքը պիտի սկսի որոտալ մեւս կողմէն ալ երկիրը պոռոտալ և այսպէս յանկարծ գատըգեղ մէջ պիտի խաղայ եղեր։

Ուրիշ վարպետ աստղաբաշխի մը խօսքին ալ նայելով, այս կործանման պատճառը մէյ մը գատըգիւղցւոց մեղքերը բազմապատկուելն է եղեր, մէյմ՚ալ տուներուն վարձքերը չափազանց աղելը։

Ըստ մեզ բուն պատճառը ատ ըլլալու չէ, այլ մենք տիպլոմաթիւթօղապէս մտածելով բուն պատճառը սա կը գտնենք որ, Պօլսոյ այդ արուարձանը տակից 8–10 տարի առաջ այսչափ մեծ չէնքեր և այսչափ բազմութիւն չէր գտնուեր, իսկ հիմայ այնչափ վսեմ և քարուկիր չէնքեր չինուած են և այնչափ մեծ բազմութիւն մը կը գտնուի, և արդէն գտնուած ծառերն ալ չատուց ի վեր չէ կըտրուելուն պատճառաւ այնչափ մեծցեր են, որ այդ արուարձանին վրայ չափէն խիտ ուեղի ծանրութիւն մը կը գտնուի այսօր. ատոր վրայ աւելցուր այդ արուարձանին ծովեզերեայ քաղաք մը ըլլալը, որուն պատճառաւ հիմը ջուրի վրայ հաստատուած խարխուլ վիճակ մը ունենալէն զատ, այս տարուան եկած առատ ձիւներն ալ այնչափ գետնին խորը թափանցեցին, որ հողը իր տեսակ վիճակը կորսնցունելով ալ անկարող կը գտնուի այդչափ ծանրութեամբ հաստատուն մնալ, հետեւաբար վշրտիլը մտ ըլլալով մաթեմաթիքական հաշուով հաղիւ մինչեւ յառաջիկայ երեքշաբթի դիշեր կրնայ դիմանալ։

Իրաց այս վիճակին մէջ, գատրգիւղցիք այսօր առջնէն ալ աչուընին դոյզ ուշ ա-ժան չընայելով առներնին կը ծախեն կոր ե-զեր, բայց դժրաղդաբար առնող չկայ. օ-գափոխութեան համար տուն բանջարներն ալ առած քէհներնին տանտերերուն թողլով հոն նին չընայած չունչերնին Աստ և պէս-յիւք աչերէ կաւնեն կոր եղեր։

Ընդհակառակն Պօլսոյ և շրջակայից հե-ատքրքիր ժողովուրդն ալ անհամբեր նոյն օրուան կատարուելիք փաղկեզդնի կործան-ման ներկայացմանը հանդիսատես գտնուելու համար, հիմակուընէ հեռագիտակներ առ-նելով բարձր դիրք ունեցող տեղեր վարձե-լու սկսեր են, ոմանք Ջամլըճայի գագաթը, ոմանք Ղալաթիա խուլէսին և ոմանք ալ Պօլ-սոյ հանդէն քէօչկիւն։

Ձը մոռնանք նաեւ ըսելու որ նոյն դիշերը Շիրքէթի խայրիէին 17 և 18 թիւ չոգենաւները յատկապէս կանխեղներով զարդարուած ըլ-լալէ զատ, երկուքին մէջն ալ զատ զատ մէյ-մէկ նուագածուաց խումբեր գտնուելով յա-ճախորդները գատրգիւղի բացը տանելով մին-չեւ առաւօտ պիտի չդադարին։

Կանայք ալ այս օրերս բաներնին գար-ձերնին թողած, ուր երթաս այս խօսքերը կը լսես.

— Քա, լսեցի՞ր, խատիճէդ պաթմիչ պի-տի ըլլայ եղեր եկող սալի դիշեր.

— Էյ կիտեմ, սա նոր խօսք չէ, ես շա-տոնց լսեյի ամա կը վախնաք ոէյի ձեզի խա-պար չը տալի, սուտ խօսք է ան.

— Քա նաղը՞լ, քա իչլէ սա եահուտի մը չը գա՞ր վի մինձ ծմեռ պիտի ըլլայ ըսեր էր ոէ եղաւ, կէնէ ան եահուտին է ըսեր.

— Էյ հէլպէթ պու պիղիմ կիտիչիմիզէ պագարան Ստամպօլուն հէր թարաֆը նին-ուէ կիտի պաթաճաք տըր.

— Քա աղէկ ըսիր, նասըլ ալ միտքդ պա-հեր ես, իրաւ նինէն կըսեր քի Ստամպօլին պաթմիչ ըլլալը մօտեցեր է.

— Պէյնամազ, նինէն չեմ ըսեր կոր, նին-ուէ քաղաքը չկայա՞ծ, ո՞ւր է սա Ցոլեան մարդարէն ծուկը կլլեց նէ.

— Վօյ պանա, սա ալ ինսա՞ր մարդ է եղեր, զահեր ծուկ հիչ չէ տեսեր քի տես-նալուն պէս կլլեր է.

— Կել տէ չիմտի էշէյի սուտան կէչիր, պէն նէ տէրիմ օ նէ աղնար.

— Վո՛չ հօգի, դուն ալ չնորհքով հիչ բան մը չես կրնար հասկրցներ.

— Է՛յ, կէնէ պաչըմայալըմ.

— Ինչը՞ պաչըմայալըմ. բերանս տա վէ-րանէն ծախենք, վերանէն ծախենք ըսելով մազ բուսաս, իրեք մէճիտիէ տալին չէ ըսիր կայնեցար, հիմայ պաթմիչ ըլլայ նէ ծառդ ինչ պիտի անոյնի. մեզք հազար մեզք, ա-սուր հօգի կարօտ պիտի ըլլանք.

— Քա ե՞ս ինչ ընեմ. ո՞վ գիտէր սանկ ըլլալիքը. վինէճիպ պաչի ե՞մ ինչ եմ. իս մի պօռայներ.

— Ինչը՞ պիտի պօռաս, վաղը վաղէ գնա ան մարդուն, պէյլի սահա չէ իմացեր նէ չսիմիչ ըրէ տէ առ բարաները եկու.

— Քա հիչ սա խօսքը չիմացո՞ղ կայ, հիչ հիմա անանկ քէօր մարդ միայն՞ է քի կը-սես. նայինք քովի խանութը մէկը կայ, ա-ռաջ կուզեր կոր ամա, հիմայ չուզեր կոր ա-մէնը բախթըմա ըսելով երկու թօփ պատմա կուտայ կոր. ես ալ չկրսեմ ինչ ընեմ։

— Քա վաղը տուր երթայ տա երկու թօփ պատման բէր պարէ. ան օլսուն քեաթ է, կը կարենք չօրսիս չօճուխ կը հագնինք։

ԺԱՄԱՆԱԿԻՍ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆԸ

Հաւատքով ինչ ես.

— Արժանապատշաճ եմ.

— Ի՞նչ ըսել է արժանապատշաճ.

— Վերն Աստուած, վարը լիրա ըսել է.

— Լիրան ո՞ւր է.

— Խօսքով ամէն տեղ է, իսկ էութիւնով անդոտանելի։

— Տանտրանեայ պատուիրանքը ո՞րն է գիտես.

— Այո՛, դիտեմ։

Ա. Հաւատաք օրէնք չունենալ.

Բ. Ընկերիդ ստացուածքին աչք տնկել և կեղտոտ մը ձեռքէն յափշտակել.

Գ. Ամուսնանալէդ եառքը թրախօտման հատածին պէս կնիկդ ձգել և առանց պատկի ուրիշ կին մը առնուլ նստիլ.

Դ. Կիրակէ և տօն օրերը խանութ բանալ և առուտուր ընել ծուլութիւն ըրած չըլլալու համար.

Ե. Սուտ երդնուլ, սուտ խօսիլ և սուտ վկայութիւն ընել.

Զ. Գիշերէ գիշեր 150 տրամի չափ օղի կըլլել, և տուն երթալ կռիւ ընել.

Է. Յայտնապէս գողութիւն ընել, և ինքզինքդ իշխանութիւն ըրած ցուցնել.

Ը. Սիրահարութեամբ ժամանակ անցընել.

Թ. Հայրդ մայրդ լըզճելով պատուել ձգելիք ժառանգութիւնը կենդանութեանը մսխելու համար.

Ժ. Բոլիթիքայի աշխատըլալ, այսինքն կեղծաւորութեան և պնակալիզութեան հմուտ։

— Ո՞վ դրեց այս պատուէրները.

— Ժամանակիս տիպլօմաթիկոնները, դրպանը ծակ խմբագիրները և անկուտի մարդամէքենաները.

— Ո՞ւր տեղ գրեցին այս օրէնքը.

— Մասիս լեռան ստորոտը.

— Ինչպէ՞ս աւանդեցին ժողովրդեան.

— Իրենք կենդանի օրինակները ըլլալով.

— Մարդս մեռնի նէ ի՞նչ կըլլայ.

— Մարմինը հողին տակէն Ամերիկա կերթայ և հոն տեղի կլիմային ղօրութեամբը 20 տարիէն եառքը նորէն աշխարհք կուգայ, ամերիկացիներն ալ Լօյտի շգենաւով Պօլիս աշխարհք կուգան.

— Մարդիկ մեղքէ հեռի կենալու համար ինչ ընելու են.

— Վերոյիշեալ տասը պատուիրանքները ճշդիւ կատարելու են.

— Այս աշխարհիս մէջ պարտապահանջին և պարտապանին տարբերութիւնը ի՞նչ է.

— Սա է որ, պարտապահանջը անօթութենէ խելքը կանիծուի, իսկ պարտապանը գէսը ծռելով, թեւերը երերցնելով կը պըտրակի.

— Քրիստոնեայի մը մահմէտականէն ուղեցած տարբերութիւնը ի՞նչ է.

— Մահմէտականին թլփատեալ ըլլալը,

— Օրինակ մը տուր որ խելքս հասնի.

— Որովհետեւ մենք ալ Մահմէտականաց պէս գէս կը դնենք, անոնց լեզուովը կը խօսինք, անոնց պէս կը քալենք, անոնց պէս կը մտածենք, վերջապէս ուրիշ տարբերութիւն մը չունինք.

— Կիրակի և տօն օրերը ինչո՞ւ համար դրուեր են.

— Մարդիկ շաբթու մէջ վաստկածնին ուտելու համար.

— Օրէնքը քա՞նի տեսակ է.

— Քառասուն. վաստաբանական, դրամական, աղդեցութենական, իլմիհալական, փաշափորթական են. ևն.

— Դրամական օրէնքը ո՞րն է.

— Մոցիդ քսակը.

(Շարն ընդ հուպ)

ՆԵՐՍԷՆ—ԴՐՍԷՆ

Երիտասարդ հայկաբան մը լրագրի մը մէջ կարդալով որ գաւառէ մը հայկաբան դասատու մը կուզուի, հետեւեալ օրը անմիջապէս տեղը հասնելով կը ներկայանայ յիշեալ գաւառացւոյ.

— Հրամանքնիդ հայկաբան դասատու ուղեր էք, ահաւասիկ.

— Այո՛, շատ աղէկ. սանկ հրամմեցէք պայուելի.

Հայկաբան պատուելին քիչ մը ժամանակ նստելով սուրճ մը և սիկար մը խմելէ վերջը գաւառացիք կը հարցնեն.

— Պայուելի, հրամանքդ ո՞ւր տեղ վարժապետութիւն ըրեր ու պաշտօն վարեր էք.

— Քանի մը ազգային վարժարաններ վիզլիթայով դաստատութիւն ըրած եմք.

— Էյ ի՞նչ ուսմունք գիտէք ուր նայիմ.

— Հայկաբանութիւն, Գաղղիաբանութիւն և ըստ բաւականին Տաճկերէն, Մաթեմաթիք, Շըմի, Ֆիզիք, Ժէօկրաֆի, Ալճեպրա, Բէրսբէքթիվ, Տօմարակալութիւն, Անաթոմի, Ժէօմէթրի ևն. ևն.

— Ձանըմ մեզի ատ սիւրիւ մը բաները պէտքը չէ, Հայկաբանութիւնդ խաւվեմի ըլլայ ան պէտք է.

— Առայ Աստուած ըստ բաւականին թէ ձեր տղաքը կրնամ յառաջացնել և թէ զձեզ գոհ ընել.

— Էյ չատ աղէկ, համբարձի մը ըսէ ուր մըտիկ ընենք նայինք.

— Ես համբարձի չեմ դիտեր, ուրիշ բան մը հարցուցեք.

— Ալ ուրիշ ի՞նչ ալ հարցունենք ուր, անոր ուր մեկ համբարձին ուր չը գիտես նը ի՞նչիս հայկաբանն էս, դնա բանդ մեր գործին չը տի դաս. պատասխանելով կը ճամբեն Հայկաբանը։

———

Պ. Մեկքան, ի՞նչ է ան կենէ բէք երկար կերթաս կոր, վախնամ դիւահիվեթէ կը դառնաս.

— Պէլի, դիւահիվեթէն, հուսա ասկէրին մեկէն պատուական սիլլէ մը կերայ քի, ախքիս քէօքը դուրս ինկաւ.

— Էյ ձայն չը հանեցիր, հիչ բան մը չըսիր.

— Ի՞նչ կըսես ալէ ախպար. առջի կերածըս չը մարսած ձայն հանէի տէ մեյ մ՚ալ ուտէի, մաշալլահ։

———

Նոր ընկերութիւն մը Զմիւռնիոյ մէջ թըղամվէյ բանեցնելու արտօնութիւն խնդրեցուց, ուղուած արտօնութիւնը չէ տրուեր իրեն, պատճառելով թէ իզմիրի վագոնները թրամվէյ բանեցնելու չափ լայնութիւն չունեն, հիմայ թէև մեր թրամվէյ կամ Օմնիպիւս բանած պօլսոյ վագոնները ուղուած լայնութիւնն ունին սէյի բռնելու ըլլանք նէ, այս հաշուով անանկ կերևի թէ Զմիւռնիա բնաւ վագոն չունենալու չէ։

Այս ենթադրութիւնը իրաւացի ցոյց կուտայ այն ատեն Զմիւռնիոյ բնակչաց կատուի պէս միշտ տուներուն տանեացը վրայ պըտրտելու սովորութիւննին։

———

Կուստան մարգոն մեկը դրացիներուն գանգատանացը վրայ, չարունակ ամեն գիշեր իր կինը ծեծելու ամբաստանութեամբ դատաստանի կը քաշուի։

Գատաստանական ատենին նախագահը ամբաստանագիրը կարդալէն յետոյ կը հարցնէ ամբաստանելոյն.

— Սիր զեվճենիզի նի՞չին տէօվերսինիզ.

— Պէնիմ ճեղվէ տէօյտիւիւմ եօք, ֆենամ.

— Գարընըզա նի՞չին տայակ ամըլօրըվըսընըզ տէյօրում.

— Նէ օլսըր ըմըշ տայակ ամմայըլա, տավաճը՛մ քիմ տիր.

— Տավաճըն սէնին քօնշուլարըն.

— Վա՛յ, քարը պէնի՞մ մի քօնշուլարըմըն մը, օնլարը՞ն նէ վազիֆէսի, խոթէր տէօյերիմ, խոթէր սեվերիմ, ծնլա՞ր նէ քարըչլօրլալը.

— Գարընը տէօյե՞րմիսին սիվալ խէյօրում սիղէ.

— Ձանըմ գարը պէնիմ տէ՞յիլ մի, նէ խոթէրսէմ եաբարըմ, պէնիմ էվիմէ քի՞մ քեհեալըք էաէճէք.

— Խա՛յըր, էվինէ քէհեալըք էաէն եօք, անճաք սէօնիկ պիւթիւն մահալլէի թաճիկ իթմէքտաէ իմիշ.

— Բէք է՛լի, պուհատան սօնրա սէռսիզ ա-թարըմ տայաղը.

— Ցէմէք քի տէօյեր իմիչսինիզ.

— Է՛օյլէ՛ ես, իմաանթսըզ գարըյա նէ՞ եաբարլար.

— Եաղըն իդրարընը, վէ՛րին աչազա.

— Աման էֆէնտիմ նէրէ՞յէ աչազա վէրի-յօրսունուզ.

— Վա՞ր մը պաչքա պիր տէյէճէղինիզ.

— Վա՛ր եա՛, տահա պիր չէյ տէմէ-տիմ.

— Մէօյլէյինիզ պաքալըմ, նիչի՞ն տէօյեր-սինիզ գարընըզը.

— Էֆէնտիմ, գարըմըն դահրը չէքիլիր չէյ տէյիլ...

— Օ՛ լաֆ տէյիլ, պաչքա՛ պիր տէյէճէ-ղինիզ.

— Ձանըմ նա՞սըլ լաֆ տէյիլ, տուրուն է-ֆէնտիմ, սիղի իսքեամէթ իմմէք իչին պիր հաֆթա կէօնտէրէյիմ սիղտէ գալսըն, պա-դընըզ դահրը չէքիլի՞ր մի չէքիլմէ՞ղ մի, օ վաքըթ պանա հագ վէրէճէքսինիզ.

Ամբաստանեալն այս արդարացումը դա-տաստանական խորհրդէն օրինաւոր դատուե-լով, մարդը անպատիժ կ՚արձակուի։

Սիվիլիզէ երիտասարդին մէկը պահճէ խա-բուն սափրիչի մը ածիլուած առեն յանկարծ հայելին կը նայի որ երեսին վրայ չորս հինգ տեղ կտրուեր է.

— Ձանըմ, նէ՞ պիչիմ թրաշ էթմէք պու, պէն վազ կէչտիմ, եիւզիւմի չէթէլէյէ չէվիր-տին.

— Ավֆ էաէրսինիզ էֆէնտիմ, ուսթա-բալարըմըզըն գլաղըսը ալընմամըշ ատը տէ պէօյլէ օլուր.

— Սաչմա. պէնիմ հիչ պէօյլէ թըրաշ օլ-տուղմ՝ եօղըրսը, պու առէթա թըրաշ էթ-մէք տէյիլ հաճամաթ քըլըքըը պիր չէյ. սէն եկէր թիւքեանընա հէր կէլէնի պէօյլէ թը-րաշ էթսէն հէր կիւն զապթիէ քօնաղընատն տըշարը չըդմահաճագսըն.

— Պիլմէյէրէք սէօյլէյօրսընըզ էֆէնտիմ, պիզիմ բիրիմիզին գաթէօրինճէ եէտի եէրէ գատար քէսէրսէք պիր չէյ լաղըմ կէլմէզ կը պատասխանէ սափրիչը։

ՅԻՇԵ՛Ս

Ցիշե՛ս, ո՛հ դու հատոր սրտիս
Արդեօք օրերն այն չքնաղ
Ջորս խօսելով ու երգելով
Կ՚անցնէինք մեք. ա՛ւաղ.
Ցիշե՛ս այն բլուր, որ մեր սիրոյն
Ակառատես միշտ եղած,
Ցիշե՛ս զանի որուն գագաթ
Զրօսնուինք մեք նստած.
Ցիշե՛ս արդեօք այն երջանիկ
Ու վայելուչ մեր տնակ,
Ուր պատուհանն երբեմն նստած
Խօսակցէինք մենք մինակ.
Ցիշե՛ս այն դաշտ, ուր յեղր ատուին
Կը նստէինք օրն ի բուն,
Կ՚զմայլէի ես քու տեսքէդ
Դու կ՚երգէիր զերմ թռչուն.
Կամ իմ ծնգանց վրայ դրած
Քու նազենի գլուխ, դիւր,
Միշտ կը խաղար քու ոսկեթել
Մազերուդ հետ քաղցր զեփիւռ.
Կը լսէինք անկից անցնող
Կարկաջահոս վտակին,
Մանրիկ ալեաց անոյշ խոխոջ
Որք մեր վշտերն տանէին.
Ուրախութիւն էր մեր բոլոր
Ջայն՝ լուկ թռչնոց դայլայլիկ,
Առանձնութեան մէջ մեք մինակ
Ուրախ զուարթ նստէինք.
Հեռվ մարդկանց աղմուկներէն
Ամեն բան մեզ բերկրառիթ,
Առատուն զուարթ, դիշերն ուրախ
Քնանայինք սիրտ ի խինդ.

Ցիշե՞ս բնաւ այս մէկ գարուն
Որ մեր սրտերն մէկ մէկու,
Անխզելի երար կցեց
Գաղղր խօսքերով սիրարկու.
Ցիշե՞ս արդեօք այն վարդենին
Զոր քու ձեռօք խնամէիր,
Այն վարդենին ղոր քու սիրուն
Դրաւական մի ըրիր.
Ցիշե՞ս արդեօք բլրոյն գագաթ
Այն ուռճալից եղեւիւն,
Որուն չուքին տակ նստելով
Խօսակցէինք կաթոգին.
Բայց այս ամեն սիրոյ յիշատակք
Ոչք արտասուաց փոխուեցան,
Այն կաթոգին լռութեան մէջ
Բոլորովին թաղուեցան.
Ո՛հ ամեն բան հոն մնացին
Սէր ու գգուանք ու համբոյր,
Այն վարդենին ալ թօշնեցաւ
Ալ չի ծիծեր այն զեփիւռ.
Քո բիւր խոստմունք, քո բիւր երդում
Քո համբոյրներ թանկագին,
Այն հեչտութեան տերերուն մէջ
Ընկերցեցան մնացին.
Ափսո՛ս, չ'եղան տեւողական
Քո համբոյրներ սիրարկու,
Կ'ուզեմ երբ արդեօք հիմայ մոքեդ
Գալ իրը երազ քաղցր'ւ ազու.
Ո՞ւր մնացին այն քու խոստմունք
Թէ մեռնիս ալ դու թէպետ,
Կըսէիր «չեմ սիրեր զայլ օք
Կը վուխամ գալ եսեւէդ».
Արդեօք ատոնք այն վտակին
Ջրերուն հետ սահեցա՞ն,
Արդեօք իմ վիշտ պիտի տեւե՞ն
Շարունակուին յաւիտեան.
Երբ այն տերեր դու այլ կ'ելլես
Դեւ ըդ տուած այլ մէկուս,
Ո՛հ կը յիշե՞ս արդեօք մէկ մը
Ինձի ըրած քու երդուս.
Արդեօք բնաւ կաթիլ մ'արցունք
Ծախ ուղերդ չի՞ թանար,
Երբ կը տեսնես այն վարդենին
Զոր սիրահարդ քեզ կուտար.
Աւա՛ղ, գիտեմ դու մոռցած ես.
Զիս և իմին քաղցրիկ սէր,
Ինչ կը մնայ ասկից ետեւ
Ինձ եթէ ոչ արտասուիլ։

21 Մայիս 1874 Պետ. Ծ. Ասլանի

Բուխարէլի Հիսար 22 Մայիս 1874

. . . Տէր

Անցեալ կիւրակէ օր որ էր ատն Հոգեգալստեան, արժանապատիւ Ամբրոսիոս վարդապետ իակենտ՝ ըհան հանգիստաւոր Ս Պատարագ մատոյց գիւղիս մատրան մէջ և ինքպատ իւր. հանդանակուած ժամուցն ալ երկսեռ վարժարանաց նուիրելու չնորհն ըրաւ որուն համար մեր չերմ շնորհակալիքը կը մատուցանենք նորին Արժանապատուութեան։

Կը փութամք նայնպէս ծանուցանել որ յառաջիկայ ուրբաթ օր Մայիս 24 Աղգային Սահմանադրութեան տօնն և չորրորդ տարեդարձն ըլլալով նոյն օրը Բերայի Արժանապատիւ Տէր Գէորգ քահանային ի պատիւ նորին հանդիսաւոր Ս Պատարագ պիտի մատուցանէ։

Ուստի խնդրեմք . . . Տէր որ հաճիք սոյն երկտող ծանուցումը ձեր թերթի միջոցաւ և առաջին պատեհութեամբ ի լուր սիրելի ազգայնոց ազդարարել։

Ի դիմաց Հիսարու թաղ. խորհրդոյ
Մ. Բառնիկ Սեֆերեան

Իսկիւտար Օճախոցս չիր.քեմի պու կիւնտէն լիմիթարէն Ալիմտարնա եէմի վէխուսուսի օլարաք Օճիխցւս իշլեմէճեք տիր։
1874 Մայիս 17

ՇԱՐԱԳԻՐ–ՏՆՕՐԻՆ
ԳԻՒՂՐԳ Ճ. ԱՃԿԱՃԵՄՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ԳԱՍՊԱՐԵԱՆ

Կոստանդնուպոլիս
Քիւրքճի խան փարի յարկ թիւ 26 եւ 31